Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 11-ի N 736 -Ն որոշման

«Հավելված N 21
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 11-ի N 1266-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N**
**ԹՌՉՆԻ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**(ՏԳՏԴ ծածկագրեր՝ 10.12, 10.13, 10.13.9)**

____ _____20 թ.

_____
(Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) ստորաբաժանման անվանումը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ավարտը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

(ՀՎՀՀ)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____ _____
(ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը _____ ամսաթիվը _____
Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

| **Տեղեկատվական բնույթի հարցեր** | | |
|---|---|---|
| **ՀՀ ը/կ** | **Հարցը** | **Պատասխանը** |
| 1. | Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված) | |
| 2. | Պետական գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 3. | Պետական գրանցման համարը | |
| 4. | Իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը | |
| 5. | Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ) | |
| 6. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ | |
| 7. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները | |
| 8. | Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ) | |
| 9. | Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 10. | Տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման (վերջին վերակառուցման (վերանորոգման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |

| | | |
|---|---|---|
| 11. | Ապրանքային նշանի, հանրահայտ ապրանքային նշանի առկայության մասին տեղեկություն | |
| 12. | Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000) | |
| 13. | Սննդի շղթայում ներգրավված աշխատողների թիվը | |
| 14. | Թողարկվող արտադրատեսակները՝ անվանացանկով, այդ թվում՝ հատուկ նշանակության սննդամթերքի արտադրության | |
| 15. | Կազմակերպության շրջանառության (իրացման) ծավալները՝ նախորդ տարվա տվյալներով (դրամ) | |
| 16. | Նպատակային շուկան՝ միջազգային և (կամ) ազգային, մարզային, տեղական շուկաներ, նշել, թե որ շուկայում է արտադրանքն իրացվում: | |

| **Վերահսկողական բնույթի հարցեր** | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **NN ը/կ** | **Հարցերը** | **Այո** | **Ոչ** | **Չ/Պ** | **Կշիռը** | **Ստուգման եղանակը** | **Նորմատիվ ակտի համարը** | **Նշումներ** |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** |
| **1.** | **ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՆՔԵՐ** | | | | | | | |
| 1.1. | Արդյո՞ք արտադրական այն օբյեկտները, որոնցում իրականացվում է թռչնի սպանդից ստացված մթերքների վերամշակումը (մշակումը) և թռչնի մսից ստացված արտադրանքի արտադրությունը, ենթարկված են պետական գրանցման: | | | | 1 | փաստաթղթային զննում | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 051/2021) Եվրասիական տնտեսաակն միության Կանոնակարգի (այսուհետ՝ ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգ) 24-րդ կետ, Մաքսային միության հանձնաժողովի | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգ) 31-րդ հոդվածի 1-ին կետ | |
| 1.2. | Արդյո՞ք արտադրական շինությունների նախագծումը, դրանց կառուցվածքը, դասավորվածությունը և չափսը ապահովում են.<br>1) պարենային (սննդային) հումքի և սննդամթերքի, աղտոտված և մաքուր գույքի հանդիպական կամ խաչաձևվող հոսքերը բացառող տեխնոլոգիական գործառնությունների հոսքայնության հնարավորությունը.<br>2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող օդի աղտոտման մասին նախազգուշացումը կամ դրա նվազեցումը.<br>3) կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների՝ արտադրական շինություններ ներթափանցումից պաշտպանությունը.<br>4) տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ տեխնիկական սպասարկում և ընթացիկ վերանորոգում, արտադրական շինությունների մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման | | | | 0.3<br>0.3<br>0.3<br>0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետեր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | և կրծողների ոչնչացման գործընթացներ իրականացնելու հնարավորությունը.<br>5) տեխնոլոգիական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ տարածությունը.<br>6) կեղտի կուտակումներից, արտադրվող սննդամթերքում մասնիկները թափվելուց, արտադրական շինությունների մակերևույթին կոնդենսատի, բորբոսի առաջացումից պաշտպանությունը.<br>7) պարենային (սննդային) հումքի, փաթեթավորման նյութերի և սննդամթերքի պահպանման պայմանները: | | | | 0.1<br>0.3<br>0.3 | | | |
| 1.3. | Արդյո՞ք արտադրական շինությունները, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) սարքավորված են՝<br>1) բնական և մեխանիկական օդափոխության միջոցներով, որոնց քանակը և (կամ) հզորությունը, կառուցվածքը և գործարկումը թույլ են տալիս խուսափել սննդամթերքի աղտոտումից, ինչպես նաև ապահովում են նշված համակարգերի ֆիլտրերի և մաքրման ու փոխման ենթակա այլ մասերի հասանելիությունը.<br>2) բնական կամ արհեստական լուսավորվածությամբ.<br>3) սանհանգույցներով, որոնց դռները չեն բացվում դեպի արտադրական շինություն և սարքավորված են մինչև նախամուտք մտնելուց առաջ աշխատանքային համազգեստի համար կախիչներով, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով.<br>4) ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով՝ տաք և սառը ջրով, ձեռքերը լվանալու միջոցներով և ձեռքերը սրբելու և (կամ) չորացնելու համար նախատեսված սարքերով: | | | | 0.2<br>0.2<br>0.2<br>0.2 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4 -րդ ենթակետեր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.4. | Արդյո՞ք արտադրական շինություններում չի պահվում անձնակազմի անձնական և արտադրական (հատուկ) հագուստ և կոշիկներ: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 3-րդ կետ | |
| 1.5. | Արդյո՞ք արտադրական շինություններում չեն պահվում սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում չօգտագործվող ցանկացած նյութ և պարագա, այդ թվում՝ լվացող և ախտահանող նյութեր, բացառությամբ արտադրական շինությունների և սարքավորումների ընթացիկ լվացման և ախտահանման համար անհրաժեշտ լվացող և ախտահանող միջոցներ: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 4-րդ կետ | |
| 1.6. | Արդյո՞ք արտադրական շինությունների մասերը, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը), համապատասխանում են՝<br>1) հատակների մակերևույթները պատրաստված են անջրանցիկ, լվացվող նյութերից, հեշտորեն լվացվում են, անհրաժեշտության դեպքում ախտահանվում, ինչպես նաև պատշաճ ձևով ցամաքեցվում.<br>2) պատերի մակերևույթները պատրաստված են անջրանցիկ, լվացվող նյութերից, որոնք կարելի է լվանալ և, անհրաժեշտության դեպքում, ախտահանել.<br>3) առաստաղները կամ դրանց բացակայության դեպքում տանիքների ներքին մակերևույթները և արտադրական շինությունների վերևում գտնվող կառուցվածքները ապահով են, ինչը կանխարգելում է կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը և առաստաղից կամ այդպիսի մակերևույթներից և կառուցվածքներից մասնիկների թափվելու հնարավորությունն ու նպաստում խոնավության խտացման նվազեցմանը.<br>4) բացվող ներքին պատուհանները (վերնափեղկերը) ունեն հեշտությամբ հանվող և մաքրվող միջատապաշտպան ցանցեր.<br>5) արտադրական շինությունների դռները հարթ, են՝ պատրաստված չներծծող նյութերից: | | | | 0.3<br>0.3<br>0.3<br>0.3<br>0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 5-րդ կետի, 1-ին, 2-րդ, 3 -րդ, 4-րդ և 5-րդ ենթակետեր | |
| 1.7. | Արդյո՞ք արտադրական շինություններում կոյուղու համակարգերը նախագծված և իրականացված են այնպես, որպեսզի բացառեն սննդամթերքի աղտոտման | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ռիսկը: | | | | | | հոդվածի 7-րդ կետ | |
| 1.8. | Արդյո՞ք արտադրական շինություններում չի իրականացվում վերանորոգման աշխատանքներ այդ արտադրական շինություններում սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացի հետ միաժամանակ: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 8-րդ կետ | |
| 1.9. | Արդյո՞ք մինչև մեկ տարեկան երեխաների սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից (փորոտիքից) ստացված արտադրանքի արտադրությունն իրականացվում է կա՛մ մասնագիտացված արտադրական օբյեկտներում, կա՛մ մասնագիտացված արտադրամասերում: | | | | 0.3 | ակնադիտական զննում, | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 80-րդ կետ | |
| 1.10. | Արդյո՞ք սննդի կառույցն ապահովված է անձնակազմի համար հանդերձարանով: | | | | 0.3 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի 6-րդ ենթակետ | |
| 1.11. | Արդյո՞ք ենթամթերքի նախապատրաստումը (ներառյալ հալեցումը, զննումը, լվացումը, մաքրամշակումը) իրականացվում է առանձին տարածքներում կամ արտադրական տարածքների՝ հատուկ այդ նպատակով առանձնացված մասերում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 66-րդ կետ | |
| 1.12. | Արդյո՞ք թռչնի ենթամթերքից ստացված արտադրանքի արտադրությունն իրականացվում է առանձին տարածքում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի կետ 67-րդ | |
| 1.13. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող տարբեր ագրեգատային վիճակներով ջուրը համապատասխանում է՝<br>1) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող ջուրը, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի և փաթեթավորման նյութերի հետ, | | | | 0.3 | ակնադիտական և փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետեր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին.<br>2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող գոլորշին, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի և փաթեթավորման նյութերի հետ, չի հանդիսանում սննդամթերքի աղտոտման աղբյուր.<br>3) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող սառույցը պատրաստված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին համապատասխանող խմելու ջրից: | | | | 0.3<br>0.3 | | | |
| 1.14. | Արդյո՞ք սննդի կառույցը ապահովված է խմելու ջրի անխափան ջրամատակարարմամբ: | | | | 0.4 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 46-րդ կետ | |
| 1.15. | Արդյո՞ք սահմանված է սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականություն և իրականացվում է: | | | | 0.4 | ակնադիտական և փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 10-րդ հոդվածի 3-րդ կետի 10-րդ ենթակետ | |
| 1.16. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում գոյացող թափոնները պարբերաբար հեռացվում են արտադրական շինություններից: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 16-րդ հոդվածի 1-ին կետ | |
| 1.17. | Արդյո՞ք թափոնները, իրենց կատեգորիաներին համապատասխան, տեղադրված են առանձին մակնշված, սարքին վիճակում գտնվող և բացառապես այդ թափոնների ու աղբի հավաքման և պահպանման համար օգտագործվող փակվող տարողություններում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 16-րդ հոդվածի 3-րդ կետ | |
| 1.18. | Արդյո՞ք արտադրական շինություններից, սննդամթերքի | | | | 0.3 | ակնադիտական | ՄՄ ՏԿ 021/2011 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արտադրության (պատրաստման) արտադրական օբյեկտի տարածքից թափոնների հեռացումը և վերացումը չի հանգեցնում սննդամթերքի, շրջակա միջավայրի աղտոտմանը, մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի առաջացմանը: | | | | | զննում | կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետ | |
| 1.19 | Արդյո՞ք կազմակերպությունն ընդգրկված է սննդի շղթայի օպերատորների համար նախատեսված տվյալների բազայում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 17-րդ հոդված | |
| **2.** | **ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ** | | | | | | | |
| 2.1. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվում են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումներ և գույք, որոնք՝<br>1) ունեն սննդամթերքի արտադրությունն (պատրաստումն) ապահովող կառուցվածքային և շահագործման բնութագրեր<br>2) հնարավորություն են տալիս իրականացնելու դրանց լվացման և (կամ) մաքրման և ախտահանման աշխատանքները.<br>3) պատրաստված են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերին ներկայացվող պահանջներին համապատասխանող նյութերից: | | | | 0.3<br>0.3<br>0.3 | Ակնադիտական և փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետեր | |
| 2.2. | Արդյո՞ք բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ կառուցված են հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և պահվում են նորոգ ու բարվոք վիճակում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 2-րդ ենթակետ | |
| 2.3. | Արդյո՞ք բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկվում են պատշաճ մաքրման ու ախտահանման: | | | | 0.3 | ակնադիտական և փաստաթղթային զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.4. | Արդյո՞ք տեխնիկական սարքավորումները, ըստ անհրաժեշտության սարքավորված/հագեցված են համապատասխան հսկիչ սարքերով: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 2-րդ կետ | |
| 2.5. | Արդյո՞ք սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումների և գույքի աշխատանքային մակերևույթները պատրաստված են չներծծող նյութերից: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 3-րդ կետ | |
| **3.** | **ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ** | | | | | | | |
| 3.1. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրության և շրջանառության փուլերում, սննդամթերքի հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթարկվել են պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների և ունեն սանիտարական (բժշկական) գրքույկ: | | | | 0.8 | փաստաթղթային զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 55-րդ կետ, «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 16-րդ հոդված 6-րդ մաս, ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 10-րդ կետ | |
| 3.2. | Արդյո՞ք սննդամթերքի միջոցով փոխանցվող հիվանդության վիրուսակիր կամ վարակիչ վերք, մաշկային հիվանդություն, խոց ունեցող անձինք չեն շփվում սննդամթերքի հետ և չեն մտնում սննդամթերքի տեղակայման գոտի, եթե առկա է սննդամթերքի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հավանականություն: | | | | 0.4 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ, ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 11-րդ կետ | |
| 3.3. | Արդյո՞ք սննդի շղթայում ներգրավված յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում, պաշտպանիչ հագուստ: | | | | 0.4 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 53-րդ կետ | |
| **4.** | **ՀՈՒՄՔԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՓՈԽԱԴՐՈՒՄ, ՄԱԿՆՇՈՒՄ ԵՎ ՊԱՀՈՒՄ** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.1. | Արդյո՞ք թռչնի սպանդից ստացված մթերքների և թռչնի մսից ստացված արտադրանքի արտադրության պրոցեսի բոլոր փուլերում ապահովված է դրանց հետագծելիությունը: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 26-րդ կետ | |
| 4.2 | Արդյո՞ք աշխատանքային հերթափոխն ավարտվելուց հետո արտադրական տարածքներում փաթեթավորման նյութեր չեն պահվում: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 28-րդ կետ | |
| 4.3. | Արդյո՞ք պաղեցման գործընթացն ավարտելուն պես թռչնի մսեղիքի չափման ցանկացած կետում ապահովվում է մինուս 1 °C-ից մինչև 4 °C ջերմաստիճան: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 43-րդ կետ | |
| 4.4. | Արդյո՞ք թռչնի մսեղիքի մասնատումը մասերի, թռչնի մսեղիքի և դրա մասերի ոսկրահանումը, մեխանիկորեն ոսկրահանված թռչնամսի, կիսապատրաստվածքների արտադրությունը, խճողակի պատրաստումը և դրանով թաղանթների լցոնումը իրականացվում է սպանդային արտադրամասից առանձին տարածքում (բաժանմունքում, տեղամասում)՝ օդի 12 °C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 46-րդ կետ | |
| 4.5 | Արդյո՞ք խոնավության զանգվածային մասը, որն անջատվում է թռչնի միսը հալեցնելիս, չի գերազանցում 4 տոկոսը: | | | | 0.4 | ակնադիտական զննում, լաբորատոր փորձաքննություն | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 57-րդ կետ | |
| 4.6 | Արդյո՞ք մեխանիկական ոսկրահանման թռչնամսով տեխնոլոգիական տարաների (տարողությունների) վրա նախատեսված են պիտակներ՝ թռչնի այդ մսի մշակման ամսաթվի և ժամի նշմամբ, կամ տեղեկատվությունը գրառելու և ընթերցելու համար էլեկտրոնային սարքեր, որոնք ապահովում են դրա հետագծելիությունը: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 61-րդ կետ | |
| 4.7 | Արդյո՞ք մանրացման և (կամ) աղադրման համար նախատեսված՝ թռչնի սպանդից ստացված մթերքը չափման ցանկացած կետում ունի 4 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 68-րդ կետ | |
| 4.8 | Արդյո՞ք<br>1) նատրիումի նիտրիտը (կալիումի նիտրիտը) կիրառվում է միայն նիտրիտային աղադրման | | | | 0.4 | ակնադիտական և փաստաթղթային | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 70-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | (աղադրման նիտրիտային) խառնուրդների տեսքով՝ նատրիումի նիտրիտի (կալիումի նիտրիտի) 0,9 տոկոսից ոչ ավելի զանգվածային մասով:<br>2) Մեկ անվանում ունեցող թռչնի մսից ստացված արտադրանքի արտադրության մեջ միաժամանակ չի օգտագործվում 2 և ավելի նիտրիտային աղադրման (աղադրման նիտրիտային) խառնուրդներ:<br>3) Չվերամշակված տեսքով իրացման համար նախատեսված՝ թռչնի սպանդից ստացված մթերքների և թռչնի մսից ստացված արտադրանքի համար չեն կիրառվում նիտրիտային աղադրման (աղադրման նիտրիտային) խառնուրդներ և ֆոսֆատներ (այդ թվում՝ ֆոսֆատ պարունակող խառնուրդների և համալիր սննդային խառնուրդների կազմում ֆոսֆատների): | | | | 0.4<br><br>0.4 | զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | | |
| 4.9. | Արդյո՞ք թռչնի մսից (ենթամթերքից) երշիկեղենի և մթերքների ջերմամշակումն իրականացվում է ջերմաստիճանը (այդ թվում՝ արտադրանքի միջուկը՝ բացառությամբ կիսաապխտած և հում թորշոմած արտադրատեսակների) և հարաբերական խոնավությունը կամ միայն ջերմաստիճանը (ջրում ջերմամշակում իրականացնելու համար) վերահսկող սարքեր ունեցող հատուկ սարքավորմամբ: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 73-րդ կետի «գ» ենթակետ | |
| 4.10. | Արդյո՞ք բոլոր տարիքային խմբերի երեխաների սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից (փորոտիքից) ստացված արտադրանքի արտադրության մեջ չի օգտագործվում<br>1) ֆոսֆատներ, համի և բույրի ուժեղացուցիչներ, բենզոյաթթուներ և սորբինաթթուներ ու դրանց աղեր, ինչպես նաև այն համալիր սննդային հավելումները, որոնց բաղադրության մեջ առկա են ֆոսֆատները, համի ու բույրի ուժեղացուցիչները, բենզոյաթթուները և սորբինաթթուներն ու դրանց աղերը:<br>2) գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ (ԳՁՕ) պարունակող՝ պարենային (սննդային) հումք.<br>3) թունաքիմիկատների կիրառմամբ ստացված՝ պարենային (սննդային) հումք: | | | | 0.4<br><br>0.4<br><br>0.4 | ակնադիտական և փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 81-րդ կետի «ա», «բ», «գ» ենթակետեր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.11. | Արդյո՞ք 6 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների և 3 տարեկանից բարձր տարիքի երեխաների սննդի համար նախատեսված պահածոներն արտադրելիս միկրոկենսաբանական կայունություն և անվտանգություն սահմանելու նպատակով արտադրողի պահեստում դրանց պահպանման տևողությունը կազմում է 21 օրից ոչ պակաս: | | | | 0.5 | ակնադիտական և փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 83-րդ կետ | |
| 4.12. | Արդյո՞ք 3 տարեկանից բարձր երեխաների սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից (փորոտիքից) ստացված՝ աղացած կիսապատրաստվածքների արտադրության բոլոր փուլերում խճողակն ունի 4 °C-ից ոչ բարձր ջերմաստիճան: | | | | 0.5 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 84-րդ կետ | |
| 4.13 | Արդյո՞ք 6 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից (փորոտիքից) պահածոներն արտադրելիս կշռածրարումը կատարվում է 0,25 դմ3 –ից ոչ ավելի տարողությամբ սպառողական փաթեթվածքով: | | | | 0.5 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 85-րդ կետ | |
| 4.14. | Արդյո՞ք սառնարանային խցիկներում թռչնի սպանդից ստացված մթերքները և թռչնի մսից ստացված արտադրանքը տեղավորված է դարսակներով՝ դարակաշարերի կամ տակդիրների վրա՝ հատակից 8 սանտիմետրից ոչ պակաս բարձրության վրա: Արտադրանքը պատերից և սառեցնող սարքավորումներից 30 սմ-ից ոչ պակաս հեռավորության վրա է: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 90-րդ կետ | |
| 4.15. | Արդյո՞ք թռչնի սպանդից ստացված մթերքների և թռչնի մսից ստացված արտադրանքի սառնարանային մշակման և պահպանման համար նախատեսված սառնարանային խցերը սարքավորված են ջերմաչափերով և (կամ) ջերմաստիճանի ու խոնավության ավտոմատ վերահսկման միջոցներով այնպես, որ ապահովվի թղթային և (կամ) էլեկտրոնային կրիչների վրա ժամանակի որոշակի միջակայքով պարամետրերի գրանցման հնարավորությունը: | | | | 0.3 | ակնադիտական և փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 91-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.16. | Արդյո՞ք թռչնի սպանդից ստացված մթերքների և թռչնի մսից ստացված արտադրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար նախատեսված տրանսպորտային միջոցները և բեռնարկղերը սարքավորված են այնպիսի միջոցներով, որոնք թույլ են տալիս պահպանել և գրանցել սահմանված ջերմաստիճանային ռեժիմը: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 95-րդ կետի 2-րդ պարբերություն | |
| 4.17. | Արդյո՞ք թռչնի սպանդից ստացված սառեցրած մթերքների և թռչնի մսից ստացված սառեցրած արտադրանքը պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և իրացման ժամանակ չի հալեցվում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 98-րդ կետի 1-ին պարբերություն | |
| 4.18. | Արդյո՞ք թռչնի մսից պատրաստված երշիկեղենի և արտադրանքի արտադրության ժամանակ միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաներ օգտագործման դեպքում մականշվածքում նշվում է դրանց առկայությունը: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 109-րդ կետ | |
| 4.19. | Արդյո՞ք թռչնի սպանդից ստացված մթերքները և թռչնի մսից ստացված արտադրանքը ֆերմենտային պատրաստուկներով մշակվելու դեպքում դրանց մականշվածքում (բաղադրության մեջ) նշվում է այդ ֆերմենտային պատրաստուկների օգտագործման մասին տեղեկատվությունը, եթե դրանց ակտիվությունը, այդ թվում՝ մնացորդայինը, պահպանվում է պատրաստի մթերքում: | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 110-րդ կետ | |
| 4.20. | Արդյո՞ք մականշվածքում նշվում է տեղեկատվություն թռչնի տեսակի և տարիքային խմբի (օրինակ՝ «հնդկահավ», «հնդկահավի ճտեր»), ամբողջական մսեղիքի մշակման եղանակի (օրինակ՝ «փորոտիքը հանած», «փորոտիքը հանած՝ փորոտիքի կոմպլեկտով և վզով»), սորտի կամ կատեգորիայի, ինչպես նաև ջերմային վիճակի մասին («պաղեցրած», «սառեցրած») | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 113-րդ կետի «ա» ենթակետ | |
| 4.21. | Արդյո՞ք մականշվածքում նշվում է տեղեկատվություն թռչնի տեսակի և տարիքային խմբի (օրինակ՝ «հավի», «ճտերի», «հնդկահավի», «հնդկահավի ճտերի») և | | | | 0.3 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 114-րդ կետի «ա» ենթակետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ջերմային վիճակի մասին («պաղեցրած», «սառեցրած») | | | | | | | |
| 4.22. | Արդյո՞ք փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը ներառում է.<br>1) սննդամթերքի անվանումը.<br>2) սննդամթերքի բաղադրությունը՝ բացառությամբ թարմ մրգերի և բանջարեղենի, քացախի և մեկ բաղադրիչով սննդամթերքի<br>3) սննդամթերքի քանակությունը.<br>4) սննդամթերքի պատրաստման ամսաթիվը.<br>5) սննդամթերքի պիտանիության ժամկետը.<br>6) սննդամթերքի պահպանման պայմանները<br>7) սննդամթերքն արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ ներմուծողի անվանումն ու գտնվելու վայրը<br>8) սննդամթերքի օգտագործմանը, այդ թվում՝ դրա պատրաստմանը վերաբերող առաջարկությունները եւ (կամ) սահմանափակումները.<br>9) սննդամթերքի սննդային արժեքի ցուցանիշները.<br>10) սննդամթերքում գենաձևափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) կիրառմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին տեղեկությունները.<br>11) Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը: | | | | 1<br>1<br>0.3<br>1<br>1<br>0.8<br>0.8<br>0.2<br>0.2<br>0.2<br>1 | ակնադիտական զննում | Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգ) 4-րդ հոդվածի 4.1-ի կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետեր | |
| 4.23. | Արդյո՞ք փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը զետեղված է ռուսերեն և հայերեն լեզուներով, բացառությամբ ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից մատակարարվող սննդամթերքն արտադրողի անվանման և գտնվելու վայրի մասին տեղեկատվության: | | | | 0.8 | ակնադիտական զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 9-րդ հոդվածի 2-րդ մաս,<br>ՄՄ ՏԿ 022/2011 4-րդ հոդվածի 4.1-րդ կետի 2-րդ ենթակետ, ՄՄ ՏԿ 022/2011 4-րդ հոդվածի 4.8-րդ կետի 3-րդ ենթակետ | |
| 4.24 | Արդյո՞ք սննդամթերքի մականշվածքի մեջ դրա նշումը, դրա պիտանիության ժամկետից կախված, կատարված է հետևյալ բառերի կիրառմամբ՝ | | | | | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով ժամը, օրը, ամիսը՝ մինչեւ 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում.<br>2) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ 72 ժամից մինչեւ երեք ամիս պիտանիության ժամկետի դեպքում.<br>3) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով ամիսը, տարին կամ օրը, ամիսը, տարին՝ երեք ամիս եւ ավելի պիտանիության ժամկետի դեպքում: | | | | 0.1<br>0.1<br>0.1 | | հոդվածի 4.6-րդ կետի 1-ին ենթակետ | |
| 4.25. | Արդյո՞ք «Պատրաստման ամսաթիվը» բառերից հետո նշվում է սննդամթերքի պատրաստման ամսաթիվը կամ սպառողական փաթեթվածքի վրա այդ ամսաթիվը նշելու տեղը: | | | | 0.1 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.6-րդ կետի 2-րդ ենթակետ | |
| 4.26. | Արդյո՞ք սննդամթերքի մականշվածքի մեջ դրա պիտանիության ժամկետի նշումը կատարված է հետևյալ բառերի կիրառմամբ՝<br>1) «պիտանի է մինչեւ»՝ նշելով ժամը, օրը, ամիսը՝ դրա մինչեւ 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում.<br>2) «պիտանի է մինչեւ»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ դրա 72 ժամից մինչեւ երեք ամիս պիտանիության ժամկետի դեպքում.<br>3) «պիտանի է մինչեւ ..... ավարտը»՝ նշելով ամիսը, տարին, կամ «պիտանի է մինչեւ»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ դրա՝ առնվազն երեք ամիս պիտանիության ժամկետ ունենալու դեպքում: | | | | 0.1<br>0.1<br>0.1 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.7-րդ կետի 1-ին ենթակետ | |
| 4.27. | Արդյո՞ք սննդամթերքի էներգետիկ արժեքը (կալորիականությունը) նշված է ջոուլներով և կալորիաներով կամ նշված մեծությունների պատիկով կամ մասով արտահայտված միավորներով: | | | | 0.1 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9-րդ կետի 4-րդ ենթակետ | |
| 4.28 | Արդյո՞ք սննդամթերքի մակնշվածքը հասկանալի է, դյուրընթեռնելի, հավաստի և սպառողներին (ձեռք բերողներին) մոլորության մեջ չգցող, գրառումները, նշանները, խորհրդանիշները կոնտրաստային են այն ֆոնի նկատմամբ, որի վրա զետեղված է մականշվածքը: Մականշվածքի զետեղման եղանակը ապահովում է սննդամթերքի պիտանիության ամբողջ ժամկետի ընթացքում դրա պահպանվածությունը՝ արտադրողի | | | | 0.4 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12-րդ կետի 1-ին ենթակետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կողմից սահմանված պահպանման պայմանները պահպանելու դեպքում: | | | | | | | |
| 4.29. | 1) Արդյո՞ք ԳՁՕ-ների օգտագործմամբ ստացված սննդամթերքի, այդ թվում՝ դեզօքսիռիբոնուկլեինաթթու (ԴՆԹ) և սպիտակուց չպարունակող սննդամթերքի համար նշված է հետևյալ տեղեկատվությունը՝ «գենետիկորեն ձևափոխված մթերք» կամ «գենաձևափոխված օրգանիզմներից ստացված մթերք» կամ «մթերքը պարունակում է գենաձևափոխված օրգանիզմների բաղադրիչներ»:<br><br>1) Արդյո՞ք Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կողքին զետեղված է ԳՁՕ-ների կիր առմամբ ստացված արտադրանքի՝ այդ նշանին ձևով եւ չափով նույնական մականշվածքը՝ «ԳՁՕ» գրառման տեսքով:<br><br>2) Այն դեպքում, երբ արտադրողը սննդամթերքի արտադրության ժամանակ չի օգտագործել գենաձևափոխված օրգանիզմներ, ապա սննդամթերքում ԳՁՕ-ի 0,9 տոկոս և դրանից պակաս պարունակությունը համարվում է պատահական կամ տեխնիկապես չվերացվող խառնուրդ, և այդ սննդամթերքը չի դասվում ԳՁՕ պարունակող սննդամթերքների շարքին: Այդ սննդամթերքի մակնշման ժամանակ ԳՁՕ-ի առկայության մասին տեղեկություններ չեն նշվում: | | | | 0.1<br><br>0.1<br><br>0.1 | ակնադիտական և/կամ փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | ՄՄ ՏԿ 022/2011 4-րդ հոդվածի 4.11-րդ կետի 1-ին ենթակետ | |
| 4.30. | Արդյո՞ք թռչնի մսից ստացված՝ ընդհանուր նշանակության արտադրանքի մակնշված չէ այնպիսի հորինված անվանումների օգտագործմամբ, որոնք ասոցացվում են մանկական սննդի համար նախատեսված արտադրանքի հետ (օրինակ՝ նրբերշիկ «Դետսկիե», երշիկ «Բուտուզ», շնիցել «Տոտոշա»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 104-րդ կետի «բ» ենթակետ | |
| 4.31. | Արդյո՞ք մսամթերքի մակնշման մեջ չեն օգտագործվում հորինված անվանումներ, որոնք շփոթելու աստիճան նույնական կամ նման են մսամթերքի համար միջպետական (տարածաշրջանային) չափանիշներով սահմանված հորինված անվանումներին: | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 104-րդ կետի «գ» ենթակետ ,ՄՄ ՏԿ 034/2013 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կանոնակարգի 107-րդ կետի «գ» ենթակետ | |
| 4.32. | Արդյո՞ք վակուումով կամ փոփոխված մթնոլորտային պայմաններում փաթեթավորված թռչնի սպանդից ստացված մթերքների և թռչնի մսից ստացված արտադրանքի մականշվածքը պարունակում է համապատասխան տեղեկություններ (օրինակ՝ «փաթեթավորված է վակուումով», «փաթեթավորված է փոփոխված մթնոլորտային պայմաններում»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 111-րդ կետ | |
| 4.33. | Արդյո՞ք կիսապատրաստվածքների (ներառյալ խոհարարական կիսապատրաստվածքները) մականշվածքում նշվում է տեղեկատվություն թռչնի տեսակի և տարիքային խմբի (օրինակ՝ «հավի մսից», «ճտի մսից», «հնդկահավի մսից», «հնդկահավի ճտի մսից»), կիսապատրաստվածքների խմբի (օրինակ՝ «աղացած»), կիսապատրաստվածքների տեսակի (օրինակ՝ «անոսկր», «մսաոսկրային», «լցոնած», «թաղանթով», «կաղապարված»), ինչպես նաև ջերմային վիճակի մասին («պաղեցրած», «սառեցրած»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 115-րդ կետ | |
| 4.34. | Արդյո՞ք թռչնի մսից ստացված արտադրանքի, խոհարարական արտադրատեսակների մականշվածքում նշվում է տեղեկատվություն թռչնի տեսակի (օրինակ՝ «հավի մսից», «հնդկահավի մսից», «բադի մսից»), պատրաստման տեխնոլոգիայի (օրինակ՝ «եփած», «տապակած», «խորոված»), սորտի կամ կատեգորիայի (օրինակ՝ «էքստրա», «բարձր») (առկայության դեպքում), ինչպես նաև ջերմային վիճակի մասին («պաղեցրած», «սառեցրած»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 116-րդ կետ | |
| 4.35. | Արդյո՞ք երշիկեղենի մականշվածքում նշվում է տեղեկատվություն երշիկեղենի տեսակի (օրինակ՝ «երշիկ», «նրբերշիկ»), թռչնի տեսակի (օրինակ՝ «հավի մսից (ենթամթերքից)», «հնդկահավի մսից»), տեխնոլոգիական մշակման եղանակի (օրինակ՝ «եփած»), սորտի կամ կատեգորիայի (օրինակ՝ «էքստրա», «բարձր») (առկայության դեպքում), ինչպես նաև ջերմային վիճակի մասին («պաղեցրած», | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 117-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «սառեցրած»): | | | | | | | |
| 4.36. | Արդյո՞ք պահածոների մականշվածքում նշվում է տեղեկատվություն պահածոների խմբի (օրինակ՝ «հավի մսից (ենթամթերքից)», «մսաբուսական», «բուսամսային»), թռչնի տեսակի և տարիքային խմբի (օրինակ՝ «հավի մսից», «ճտի մսից»), տեխնոլոգիական մշակման եղանակի (օրինակ՝ «մանրէազերծված», «պաստերացված»), ինչպես նաև պահածոների տեսակի մասին (օրինակ՝ «սեփական հյութի մեջ»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 118-րդ կետ | |
| 4.37. | Արդյո՞ք թռչնի սննդային ճարպերի մականշվածքում նշվում է տեղեկատվություն թռչնի տեսակի (օրինակ՝ «հավի հալեցրած ճարպ»), ինչպես նաև ջերմային վիճակի մասին («պաղեցրած», «սառեցրած»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 119-րդ կետ | |
| 4.38. | Արդյո՞ք չոր մթերքների և արգանակների մականշվածքում նշվում է տեղեկատվություն արտադրանքի խմբի («թռչնի») և արտադրանքի տեսակի մասին («չոր մթերք»). արգանակների մականշվածքում տեղեկատվություն է նշվում արտադրանքի խմբի («թռչնի»), տեխնոլոգիական մշակման եղանակի («չոր», «խտացված», «հեղուկ») և արտադրանքի տեսակի մասին (օրինակ՝ «թռչնի խտացված արգանակ»): | | | | 0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 120-րդ կետ | |
| 4.39. | Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված՝ թռչնի սպանդից ստացված մթերքների և մանկական սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից ստացված արտադրանքի մակնշումը համապատասխանում է նաև հետևյալ պահանջներին՝<br>1) տեղեկատվություն արտադրանքի՝ մանկական սննդի համար նախատեսված լինելու մասին (օրինակ՝ «վաղ տարիքի երեխաների համար», «նախադպրոցական տարիքի երեխաների համար», «դպրոցական տարիքի երեխաների համար») կամ տեղեկատվություն՝ երեխայի կոնկրետ տարիքի նշմամբ, որից սկսած այդ արտադրանքը կարելի է օգտագործել (օրինակ՝«6 տարեկանից բարձր երեխաների սննդի համար»). | | | | 0.2<br>0.1 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 121-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետեր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2) տեղեկատվություն սպառողական փաթեթվածքը բացելուց հետո պիտանիության ժամկետի և պահպանման պայմանների մասին.<br>3) երեխաների՝ կյանքի առաջին տարվա համար նախատեսված արտադրանքի համար՝ տեղեկատվություն երեխայի այն տարիքի մասին (ամիսներով), որից սկսած թույլատրվում է երեխայի սննդակարգում ընդգրկել տվյալ արտադրանքը, և այդ արտադրանքի մանրացվածության աստիճանի մասին (օրինակ՝ «հոմոգենացված», «խյուսանման», «խոշոր կտորների մանրացված»), ինչպես նաև առաջարկություններ դրա օգտագործման վերաբերյալ: | | | | 0.1 | | | |
| 4.40. | Արդյո՞ք սննդամթերքի անվանումը, քանակությունը, սննդային արժեքի ցուցանիշները, սննդամթերքում գենաձևափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին տեղեկությունները նշված են 2 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ տառատեսակով (փոքրատառեր): | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12-րդ կետի 1-ին ենթակետ | |
| 4.41. | Արդյո՞ք սննդամթերքի բաղադրությունը՝ բացառությամբ մեկ բաղադրիչով սննդամթերքի, պահպանման պայմանները, արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ ներմուծողի անվանումն ու գտնվելու վայրը, պատրաստման ամսաթիվը և պիտանիության ժամկետը և օգտագործմանը, այդ թվում՝ դրա պատրաստմանը վերաբերող առաջարկությունները և (կամ) սահմանափակումները, պիտանիության ժամկետը, պատրաստման ամսաթիվը, զետեղելու մասին տեղեկատվությունը նշված են 0.8 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ տառատեսակով . | | | | 0.3 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12-րդ կետի 1-ին ենթակետ | |
| 4.42. | Արդյո՞ք թռչնի մսից ստացված արտադրանքը (բացառությամբ մանկական սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից ստացված արտադրանքի և նոր տեսակի սննդամթերքի) ենթակվել է համապատասխանության հայտարարագրման՝ համաձայն սահմանված կարգի: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 128-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.43. | Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված՝ թռչնի մսից ստացված արտադրանքը և նոր տեսակի սննդամթերքը ունի պետական գրանցում: | | | | 1 | փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 141-րդ կետ | |
| 4.44. | Արդյո՞ք շրջանառության մեջ դրված փաթեթվածքը (խցափակման միջոցները) անցել է համապատասխանության գնահատում: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի՝ միայն սննդամթերքի հետ շփվող փաթեթվածքի համար (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 005/2011 կանոնակարգ) 3-րդ հոդվածի 1-ին կետ | |
| 4.45. | Արդյո՞ք փաթեթվածքը (խցանափակման միջոցները) մականշված է արտադրանքի շրջանառության միասնական նշանով, որը դրված է ուղեկցող փաստաթղթերի վրա: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 005/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին կետ | |
| 4.46. | Արդյո՞ք փաթեթավորման գործընթացները կատարվում են սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում՝ ապահովելով փաթեթավորման ամբողջականությունն ու մաքրությունը: | | | | 0.2 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 66-րդ կետ | |
| 4.47. | Արդյո՞ք բազմակի օգտագործման փաթեթավորման նյութերն ու բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող են: | | | | 0.2 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 67-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.48. | Արդյո՞ք հումքը, բաղադրիչները, կիսապատրաստվածքը և վերջնական արտադրանքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, պահվում են դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում: | | | | 0.2 | ակնադիտական զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ | |
| 4.49. | Արդյո՞ք սննդամթերքի փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացվում է տրանսպորտային միջոցներով՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված փոխադրման (տրանսպորտային փոխադրման) պայմաններին համապատասխան, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված սննդամթերքի պահպանման պայմաններին համապատասխան: | | | | 0.2 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 1-ին կետ | |
| 4.50. | Արդյո՞ք միաժամանակ սննդամթերքի տարբեր տեսակների կամ սննդամթերքի և այլ բեռների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար տրանսպորտային միջոցների և (կամ) բեռնարկղերի օգտագործումը իրականացվում է սննդամթերքի հետ շփումը, աղտոտումը և զգայորոշման հատկությունների փոփոխումը բացառող պայմաններում: | | | | 0.2 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 2-րդ կետ | |
| 4.51. | Արդյո՞ք տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պատրաստված են լվացվող նյութերից: | | | | 0.2 | ակնադիտական զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 5-րդ կետ | |
| 4.52. | Արդյո՞ք սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցն ունի սանիտարական անձնագիր: | | | | 0.2 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս | |
| 4.53. | Արդյո՞ք չի արտադրվում չգրանցված աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով և երաշխավորված ավանդական արտադրանքի մակնշմամբ արտադրանք: | | | | 0.2 | ակնադիտական զննում, փաստաթղթային զննում | «Աշխարհագրական նշումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մաս | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.54 | Արդյո՞ք առկա սննդամթերքը տեխնիկական կանոնակարգման օբյեկտների շարքին դասելու նպատակով նույնական է՝<br>ըստ անվանման<br>և /կամ/ տեսողական մեթոդով<br>և /կամ/ զգայորոշման մեթոդով<br>և /կամ/ վերլուծական մեթոդով | | | | 0.2 | ակնադիտական զննում, փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդված | |
| **5.** | **ՀՈՒՄՔԻ ԵՎ ԹՌՉՆԱՄՍԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** | | | | | | | |
| 5.1. | Արդյո՞ք տեղական արտադրության կենդանիների սպանդից գոյացած վերամշակված, իրացվող, վաճառվող, մատակարարվող կենդանական ծագման մթերքը և կենդանական ծագման հումքը սպանդանոցային ծագման է. | | | | 1 | փաստաթղթային զննում | «Անասնաբուժության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ | |
| 5.2. | Արդյո՞ք պատրաստողները վարում և պահում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ փաստաթղթերը՝ ներառյալ կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը՝ թղթային և (կամ) տեղեկատվության էլեկտրոնային կրիչներով, որոնք պահվում են դրանց տրման օրվանից երեք տարվա ընթացքում: | | | | 0.3 | փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 11-րդ հոդվածի 4-րդ կետ | |
| 5.3. | Արդյո՞ք ընդունվող հումքը համապատասխանում է դրանց անվտանգության պահանջներին և ունի անվտանգությունը հավաստող (հիմնավորող) փաստաթղթեր: | | | | 0.5 | ակնադիտական և փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս | |
| 5.4. | Արդյո՞ք արտադրությունում չի իրացվում պարենային (սննդային) հումք, անկախ այն հանգամանքից, թե | | | | | ակնադիտական զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պիտանիության ժամկետի նշումը որ լեզվով է կատարված, եթե՝<br><br>1) պիտանիության ժամկետն անցած է.<br><br>2) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ.<br><br>3) ժամկետը կրկնակի մակնշված է կամ բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է, և նշված է պիտանիության նոր ժամկետ: | | | | 0.5<br><br>0.4<br><br>0.4 | | օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մաս | |
| 5.5. | Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված թռչնի մսից ստացված արտադրանքի մեջ առկա չէ բենզ(ա)պիրեն, դիօքսիններ և միկոտոքսիններ | | | | 0.4 | փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 19-րդ կետ | |
| 5.6. | Արդյո՞ք պահածոներ արտադրելիս պահպանվում եմ հետևյալ պահանջները՝<br><br>1) պահածոների համար նախատեսված սպառողական փաթեթվածքի հերմետիկությունը հերթափոխին ստուգվում է 3 անգամից ոչ պակաս, ինչպես նաև սարքավորումների յուրաքանչյուր կարգավորումից, վերանորոգումից կամ մասերի փոխարինումից հետո.<br><br>2) պահածոների արտադրության տեխնոլոգիական գործընթացի տևողությունը՝ հումքի նախապատրաստումից մինչև մանրէազերծումը կամ պաստերացումը, չի գերազանցում 2 ժամը՝ մանրէազերծված պահածոների համար, և 1 ժամը՝ պաստերացված պահածոների համար՝ առանց հաշվի առնելու աղադրման գործընթացի ժամանակահատվածը.<br><br>3) թերխաշ հումքի ջերմաստիճանը՝ մինչև սպառողական փաթեթվածքի մեջ կշռածրարելը, 40 °C-ից ոչ պակաս է. | | | | 0.4<br><br>0.4<br><br>0.4 | ակնադիտական զննում<br><br>ակնադիտական զննում<br><br>ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «ա» ենթակետ<br><br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «բ» ենթակետ<br><br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «գ» ենթակետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4) սպառողական փաթեթվածքի հերմետիկացման պահից մինչև պահածոների ջերմային մշակումն սկսելու ժամանակահատվածը չի գերազանցում 30 րոպեն.<br>5) պահածոների ջերմային մշակումն իրականացվում է մանրէազերծման կամ պաստերացման ռեժիմի համաձայն, որով ապահովվում է պատրաստի արտադրանքի անվտանգությունը<br>6) այն փաստաթղթերը, որոնք պարունակում են մանրէազերծման կամ պաստերացման պարամետրերը, որոնք գրառվում են տեղեկատվության թղթային և (կամ) էլեկտրոնային կրիչների վրա, արտադրողի կողմից պահվում են պահածոների պիտանիության ժամկետը գերազանցող՝ 3 ամսից ոչ պակաս ժամանակահատվածով.<br>7) պահածոների պիտանիության ժամկետը սահմանվում է արտադրողի կողմից՝ ելնելով պահածոների խմբից, սպառողական փաթեթվածքի հատկություններից և մանրէազերծման ձեռք բերված արդյունքի մեծությունից.<br>8) միկրոկենսաբանական կայունության և անվտանգության սահմանման նպատակով պահածոների պահպանման տևողությունը արտադրողի պահեստում կազմում է 11 օրից ոչ պակաս: | | | | 0.4<br>0.4<br>0.4<br>0.4<br>0.4 | ակնադիտական զննում<br>ակնադիտական զննում<br>ակնադիտական և փաստաթղթային զննում<br>ակնադիտական զննում<br>ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «դ» ենթակետ<br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «ե» ենթակետ<br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «զ» ենթակետ<br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «է» ենթակետ<br>ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 77-րդ կետի «ը» ենթակետ | |
| 5.7. | Արդյո՞ք տեխնոլոգիական ռեժիմները ապահովում են ֆերմենտների լրիվ ապաակտիվացումը տեխնոլոգիական գործընթացներն ավարտելուց հետո: | | | | 0.4 | ակնադիտական զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 78-րդ կետի «բ» ենթակետ | |
| 5.8. | Արդյո՞ք մանկական սննդի համար (բոլոր տարիքային խմբերի համար), այդ թվում՝ կազմակերպված մանկական կոլեկտիվների համար նախատեսված՝ թռչնի մսից ստացված արտադրանքն արտադրելիս՝<br>1) օգտագործվում է միայն պաղեցրած միս, | | | | 0.4 | ակնադիտական զննում, | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 79-րդ կետ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **2)** չի օգտագործվում մեխանիկական ոսկրահանման թռչնամիս և թռչնի կոլագեն | | | | 0.4 | փաստաթղթային զննում ակնադիտական զննում, փաստաթղթային զննում | ԵԱՏՄ ՏԿ 051/2021 կանոնակարգի 79-րդ կետ | |
| **6.** | **ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ** | | | | | | | |
| 6.1. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրությունը (բացառությամբ հանրային սննդի), տեխնոլոգիական գործելակարգը (ռեժիմը) և տեխնոլոգիական գործընթացը իրականացվում է տվյալ սննդամթերքի համար արտադրողի հաստատած տեխնոլոգիական հրահանգին համապատասխան: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 8-րդ հոդվածի 1-ին մաս | |
| 6.2. | Արդյո՞ք արտադրվող սննդամթերքի տեխնոլոգիական հրահանգները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեխնոլոգիական հրահանգին ներկայացվող պահանջներին: | | | | 0.4 | փաստաթղթային զննում | Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 885-Ն որոշում 5-րդ կետ | |
| 6.3. | Արդյո՞ք չի արտադրվում վտանգավոր և կեղծված սննդամթերք, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող վտանգավոր նյութեր: | | | | 1 | ակնադիտական, փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն | «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս | |
| 6.4. | Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, արտադրողի (պատրաստողի) կողմից մշակվել, իրականացվում և պահպանվում է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP — Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը: | | | | 0.6 | փաստաթղթային զննում | ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է<br>(«Այո»՝ նշվում է հարցում ներառված պահանջների կեսի և կեսից ավելիի դրական պատասխանի դեպքում, որը չի կշռավորվում) | V | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում<br>(«Ոչ»՝ նշվում է հարցում ներառված պահանջների՝ մինչև կեսի դրական պատասխանի դեպքում, որը կշռավորվում է) | | V | |
| 3. | «Չ/Պ»՝ չի պահանջվում, չի վերաբերում | | | V |

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք
2. «Աշխարհագրական նշումների մասին» օրենք
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 885-Ն որոշում
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշում
5. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 051/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ
7. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
8. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ:

ՍԱՏՄ ծառայող _____ Տնտեսավարող _____

(ստորագրությունը) (ստորագրությունը)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ